ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

"YEREVAN TPC" CJSC

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

№ 1
29.05.2025թ

ՈՐՈՇՈՒՄ

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 88-րդ հոդվածի պահանջներով՝

Պ Ա Ր Զ Վ Ե Ց

<u>Գործի նախապատմությունը.</u>

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 2025թ. ապրիլի 11-ին մարտկոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՋԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որն իրականացվել է էլեկտրոնային գնումների eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

Ընթացակարգի 3-րդ և 4-րդ (երրորդ և չորրորդ) չափաբաժինների համար մասնակցության հայտ է ներկայացրել «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (այսուհետ՝ Մասնակից), (ՀՎՀՀ 08287363): Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից 2025 թվականի ապրիլի 28-ին տեղի ունեցած հայտերի բացման և գնահատման նիստում որոշվել է 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով որպես ընտրված մասնակից ճանաչել և հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել Մասնակից «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 2-րդ մասով՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը՝ 2025 թվականի մայիսի 14-ին Պատվիրատուն Համակարգի միջոցով ծանուցել է ընտրված Մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի

կամ կանխիկ փողի ձևով ներկայացնելու առաջարկները և պայմանագրի նախագիծը: Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Մասնակցին տրվել է հինգ աշխատանքային օր ժամկետ՝ վերջինիս կողմից հաստատված պայմանագիրը և որակավորման, պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված տուժանքի ձևով ներկայացնելու համար:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումները:

Վերոնշյալ ժամկետի ավարտին, Մասնակցի կողմից հաստատված պայմանագիրը և տուժանքի մասին համաձայնագրերը չեն ներկայացվել:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հանձնաժողովը 2025թ. Մայիսի 23-ին տեղի ունեցած նիստում՝ ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, որոշում է կայացրել գնման ընթացակարգը հայտարարել չկայած և մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում :

<u>Գործի քննության իրավական հիմքերը.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է ցուցակում, եթե՝ որպես ընտրված մասնակից զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Որոշում եմ

1. «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:
2. Որոշումը տրամադրվում է լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված ժամկետում և կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գլխավոր տնօրենի պ/կ Ա. Բաղդասարյան

Կատարող՝ Գնումների և մատակարարման բաժնի
Գլխավոր մասնագետ՝ Ն. Փարսադանյան
Հեռ. 011 47 27 60/ 096 74 67 23